ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 091407836, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

1.03.2019
341-68

ՀՀ Ազգային անվտանության ծառայության
տնօրեն պարոն Արթուր Վանեցյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Վանեցյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2018 թվականի ընթացքում գաղտնազերծված փաստաթղթերի մասին էլեկտրոնային հարցմանն ի պատասխան ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը 26.02.2019 թ.-ին ԻԱԿ-ին ուղարկված գրությամբ տեղեկացրել է, որ «2018 թվականի ընթացքում ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրինության տակ գտնվող որոշ փաստաթղթեր գաղտնազերծվել և քրեական գործերի շրջանակներում փոխանցվել են համապատասխան մարմիններ»:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք.

1. Տեղեկացնել, թե ՀՀ ԱԱԾ տնօրինության տակ գտնվող քանի՞ փաստաթուղթ է գաղտնազերծվել 2018 թվականի ընթացքում:
2. Տրամադրել 2018 թվականի ընթացքում գաղտնազերծված փաստաթղթերի ցանկը:
3. Տրամադրել այն մարմինների ցանկը, որոնց փոխանցվել են վերոնշյալ գաղտնազերծված փաստաթղթերը:

Խնդրում ենք, տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան